



Ընդհանուր Օժանդակության Իրավունքները և Պարտականությունները

ԱՅՍ ԶԱՐՑԱԹԵՐԹԻ ՆՄԱՏԱԿԸ. Այս հարցաթերթը տեղեկացնում է ձեզ ձեր իրավունքների և պարտականությունների մասին երբ դիմում եք կամ ստանում եք Ընդհանուր Օժանդակություն (GR): Դուք պետք է վերանայեք և հասկանաք սրանք, երբ դիմում եք GR-ի համար:

Եթե ստորագրեք այս ձևը, դուք համաձայն եք, որ հասկանում եք ձեր իրավունքները և պարտականությունները:

Եթե չստորագրեք այս ձևը, ձեր GR դիմումն ազդիրը թերի է:

Երբ դուք դիմում եք կամ ստանում եք Ընդհանուր Օժանդակություն (GR), դուք իրավունք ունեք՝

1. Հարգալից վերաբերմունքի:
2. Ստանալ ծառայություններ առանց հաշվի առնելու ռասան, մաշկի գույնը, դավանանքը, ազգային ծագումը, կրոնը, քաղաքական հայացքը, ամուսնական կարգավիճակը, սեռը, հաշմանդամությունը, կամ տարիքը:
3. Բողոքարկել եթե կարծում եք, որ ձեր նկատմամբ խտրականություն է ցուցաբերվել:
4. Խնդրել հարմարեցումներ, եթե հաշմանդամ եք և ունեք օգնության կարիք՝ նպաստների դիմելու կամ ցանկացած GR-ի պահանջները բավարարելու համար : Դուք կարող եք օգնություն խնդրել՝
 - o Դիմելով ցանկացած Հասարակական Սոցիալական Ծառայությունների Վարչության (DPSS) աշխատողին:
 - o Չանգահարելով Հաշմանդամ Ամերիկացիների Վերաբերյալ Օրենքի (ADA) թեժ գծին՝ (844) 586-5550:
5. Տեղեկություն ստանալ DPSS-ից ձեր ընտրած լեզվով:
6. Ստանալ թարգմանչի ծառայություն, DPSS-ի գրասենյակ այցելելու ժամանակ:
 - o Այս ծառայությունը անվճար է:
 - o Ցանկության դեպքում կարող եք օգտվել ձեր սեփական թարգմանչից:
7. Ձեր դիմումը ընթացքի մեջ դնել սահմանված ժամանակում:
8. Հետ վերցրեք ձեր GR-ի դիմումն ազդիրը, նախքան DPSS-ը հայտնի ձեզ թե դուք GR նպաստներ կստանաք թե ոչ:
9. Ստանալ գրավոր ծանուցում, եթե ձեր GR-ի դիմումն ազդիրը մերժվել է:
 - o Ծանուցումը կներառի պատճառը(ները), որի(որոնց) հետևանքով ձեր նպաստները մերժվել են:
 - o Եթե համաձայն չեք, կարող եք մերժումը բողոքարկել՝
 - Խոսելով ձեր DPSS-ի աշխատողի հետ:
 - Խոսելով ձեր DPSS-ի աշխատողի կառավարչի հետ:
 - Խոսելով ձեր DPSS-ի դատական բողոքների գործակալի հետ:
10. Ստանալ գրավոր ծանուցում առնվազն տաս օր առաջ, մինչև ձեր բոլոր նպաստները նվազեցվելը կամ դադարելը:
 - o Ծանուցումը կներառի.
 - Փոփոխության պատճառը(ները):
 - Փոփոխության մասին լուսմների ամսաթիվը:
 - o Եթե համաձայն չեք, կարող եք վիճարկել ձեր լուսմը:
 - Դուք այս լուսմը իրավունք ունեք բերել վկա կամ ապացույց:
 - Այն աշխատակիցը, որ վարում է լուսմը չեզոք կլինի:
11. Լսման ընթացքում վիճարկեք որևէ ծանուցում, որտեղ ասվում է, որ պետք է մարզին հետ վճարեք գերավճարը:
 - o Դուք այս լուսմը իրավունք ունեք բերել վկա կամ ապացույց:
 - o Այն աշխատակիցը, որ վարում է լուսմը չեզոք կլինի:
12. Ընտրել մեկին, որին վստահում եք, որ ձեր փոխարեն որոշումներ կայացնի և խոսի DPSS-ի հետ ձեր գործի վերաբերյալ:
 - o Այս անձը կարող է նաև օգնել ձեզ լրացնել հարցաթերթերը և հայտնել փոփոխություններ, ձեր փոխարեն:
 - o Եթե դուք ընտրեք մեկին, այդ անձը կդառնա ձեր «Լիազոր Ներկայացուցիչը»:
 - o Դուք կարող եք խոսել ձեր DPSS-ի աշխատողի հետ լիազոր ներկայացուցչի վերաբերյալ տեղեկության համար:
13. Ընտրել մեկին, ում դուք վստահում եք, որ մուտքագրվի և ծախսի ձեր GR նպաստները:
 - o Այն անձը, որին դուք ընտրելու եք, կլինի ձեր «Փոխարինող Քարտատերը»:
 - o Դուք կարող եք խոսել ձեր DPSS-ի աշխատողի հետ փոխարինող քարտատիրոջ վերաբերյալ տեղեկության համար:



- 14. Պահել ձեր գործի արձանագրությունները գաղտնի պահեք: Ձեր գործի արձանագրությունները կարող են տեսնել միայն
 - o Մարզի կամ նահանգի աշխատակիցները, ովքեր վերահսկում կամ ուղղորդում են GR ծրագիրը:
 - o Մարզի գլխավոր ատենակալը:
 - o Ոստիկանությունը:
- 15. Դիտել ձեր գործի արձանագրությունները, բացառությամբ որևէ «արտոնյալ տեղեկատվության», որը DPSS-ը ստանում է, որ
 - o DPSS-ը թույլտվություն չունի կիսվելու:
 - o Պարունակում է գաղտնի տեղեկություն այլ անձի մասին:
- 16. DPSS-ից օգնություն ստանալ, եթե ցանկանում եք արձանագրվել քվեարկելու համար:
- 17. Ստանալ շտապ օգնության ծառայություններ, եթե դուք՝
 - o Իրավասու եք ստանալու GR:
 - o Սպասում եք GR-ի հաստատմանը:
 - o Իրավասու չեք օգտվելու CalFresh ծրագրից:
 Շտապ օգնության ծառայությունները կարող են ներառել՝
 - o Հյուրանոցի ուղեգրեր:
 - o Սննդի ուղեգրեր:
 - o DPSS ծառայությունների հետ կապված հանդիպումների համար տրանսպորտային ուղեգրեր:
- 18. Դիմել Medi-Cal նպաստների համար:
- 19. Դիմել CalFresh նպաստների համար:
- 20. Խնդրել անվճար իրավաբանական խորհրդատվություն կամ լսում՝ դիմելով իրավական օգնության գրասենյակ:
- 21. Ընտրել ձեր սեփական ապրելու պայմանները և վայրը Լոս Անջելես մարզում:
- 22. Օգտագործել PO BOX կամ որևէ փոստային հասցե LA-ի մարզում նամակներ ստանալու համար:
- 23. Օգտագործել շրջանային գրասենյակը, որտեղ դուք դիմել եք, որպես ձեր փոստային հասցե DPSS-ի հետ կապված նամակների համար: Եթե օգտագործում եք այս տարբերակը, դուք պետք է վերցնեք ձեր փոստը առնվազն շաբաթը մեկ:
- 24. Խնդրել փոխել DPSS-ի աշխատողին կամ ձեզ նշանակված Ընդհանուր Օժանդակություն Աշխատանքի Տեղավորման Հնարավորություններ (GROW) ծրագրի աշխատողին:

Երբ դուք դիմում եք կամ ստանում եք Ընդհանուր Օժանդակություն (GR), ձեր պարտականություններն են.

- 1. Տրամադրել DPSS-ին բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, որոշելու համար ձեր GR-ի իրավասությունը:
- 2. Տրամադրել DPSS-ին բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, որոշելու համար ձեր նպաստի քանակը:
- 3. Բավարարել բոլոր GR ծրագրի պահանջները:
- 4. Պահպանել ձեր բոլոր ժամադրությունները:
 - o Տեղեկացրեք ձեր DPSS-ի աշխատողին, եթե չեք կարող ներկայանալ ժամադրությանը:
- 5. Համագործակցել GROW ծրագրի հետ:
 - o Դուք ազատված եք, քանի որ եթե ֆիզիկական կամ հոգեկան առողջության խնդիրների պատճառով չեք կարող աշխատել:
 - Դուք պետք է տրամադրեք ապացույց բժշկական կամ հոգեկան առողջապահական մատակարարից:
 - DPSS-ի աշխատողը կբացատրի, թե ինչպես տրամադրել ապացույց, երբ դիմում եք GR-ի համար:
- 6. Դիմել և ընդունել որևէ մատչելի եկամուտ, ինչպես օրինակ.
 - o Անաշխատունակության Ապահովագրության Նպաստներ:
 - o Հաշմանդամության Ապահովագրության Նպաստներ:
 - o Սոցիալական Ապահովագրության Եկամուտ:
- 7. Պարբերաբար ստուգել ձեր փոստը DPSS-ից ձեր նպաստների վերաբերյալ ստացած ծանուցումների համար:
 - o Եթե դուք անօթևան եք և չունեք փոստային հասցե, դուք կանոնավոր պետք է ստուգեք փոստը ձեր GR-ի գրասենյակում:
 - o Դուք նաև կարող եք ստուգել DPSS-ից ստացած ծանուցումները DPSS-ի Ձեր Ներկա Նպաստները (YBN) կայքէջում այցելելով՝ (dpss.lacounty.gov):



- 8. Լրացրե՛լ և ներկայացնե՛լ Ընդհանուր Օժանդակության Եռամսյակային Հաշվետվությունը, QR 7 LA, մինչև տրված ամսվա ժամկետի տասներորդ օրը:
 - o Ուշ ներկայացված GR Եռամսյակային Հաշվետվությունը կարող է հանգեցնել ձեր նպաստների ուշացմանը և/կամ դադարեցմանը:
 - o Դուք կարող եք ներկայացնել QR7-LA փոստով կամ YBN կայքէջով:
 - o Նշենք, որ որոշ մարդիկ կարող են չլրացնել GR-ի Եռամսյակային Հաշվետվությունը: Մանրամասների համար դիմեք DPSS-ի աշխատողին:
- 9. Տեղեկացնե՛լ փոփոխություններ, որոնք կարող են փոխել ձեր GR նպաստները կատարված փոփոխության ամսաթվից սկսած **հինգ օրվա** ընթացքում: Դուք պետք է հայտնեք փոփոխությունները՝
 - o Զանգահարելով Հաճախորդների Սպասարկման Կենտրոն՝ 866-613-3777 կամ
 - o Լրացնելով GR Կիսաեռամսյակային Կարգավիճակի Հաշվետվությունը (QR3) ԵՎ QR 7-LA:

Փոփոխություններ, որոնք կարող են ազդեցություն ունենալ GR նպաստների վրա.

 - o Մեկ անձի համար ամսական \$203 կամ ավելի նոր վաստակած եկամուտ:
 - Վաստակած եկամուտը ցանկացած աշխատանքից ստացված գումար է:
 - o Մեկ անձի համար ամսական \$25 կամ ավելի նոր չվաստակած եկամուտ:
 - Չվաստակած եկամուտը փող է, որը դուք ստանում եք ոչ աշխատանքային աղբյուրներից: Օրինակները ներառում են՝
 - Անաշխատունակության ապահովագրության նպաստներ:
 - Նահանգի հաշմանդամության ապահովագրություն:
 - Վետերանների նպաստ:
 - o Ինչ որ մեկը տեղափոխվել է ձեր տուն կամ տնից հեռացել է:
 - o Դուք հասցեի փոփոխություն ունեք:
 - o Գնում եք բանտ կամ ազատվում եք բանտից:
 - o Ձեր ընտանիքից որևէ մեկը փախչում է քրեական հանցագործությունից, խուսափելով հետապնդումից կամ կալանքից/դատապարտումից:
 - o Միացյալ Նահանգների Քաղաքացիության և Ներգաղթի Ծառայությունները որոշում է կայացնում ձեր T կամ U վիզաների վերաբերյալ:

Նշում. Հայտնեք բոլոր այլ փոփոխությունները ձեր եռամսյակային հաշվետվության մեջ:
- 10. Մարզին հետ վճարել այն նպաստները, որոնք դուք սխալմամբ ստացել եք, որովհետև.
 - a) մենք սխալ ենք գործել կամ
 - b) դուք իրավասու չէիք:

Դուք կարող եք մարզին հետ վճարել՝

 - o Կրճատելով ձեր GR-ի նպաստը:
 - o Դադարեցնելով ձեր GR-ը որոշ ժամանակահատվածով:
- 11. Եթե դուք դիմում եք Լրացուցիչ Ապահովության Եկամտի (SSI)/ Նահանգի Լրացուցիչ Վճարման (SSP) համար, որևէ GR, որ ստանում եք կնվազեցվի ձեր առաջին չեկից:

Ես կարդացել եմ կամ ինչ որ մեկը վերը նշվածը կարդացել է ինձ համար: Ես հասկանում եմ և համաձայն եմ այս իրավունքներին և պարտականություններին:

Դիմորդի/Ստացողի Ստորագրություն Ամսաթիվ

Ամուսին/կին/ընտանեկան ընկեր/ներկայացուցիչ Ամսաթիվ